

ՎԱՏԱՀՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ  
ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍՏՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Լիլիաննա Հովսեփյան  
*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ*

Սույն հոդվածում ներկայացված են վատահության ձևաբրման գործընթացի առանձնահատկաթյունները հայ հասարակությունում։ Հետազոտությունն անցկացվել է Երևանում։ Հիմնական շեշտադրումներից է վատահության ձևավորման մեխանիզմների, վատահության տեսակների, վատահության ձևավորման գործոնների և մակարդակների բացահայտումը։ Ընդհանուր առմամբ, վատահությունը սահմանվում է որպես երկկողմանի փոխանակման գործընթաց, որտեղ կարևորվում են փոխանակման գործընթացի սուբյեկտների հատկանիշները, փոխանակվող հաղորդագրության ֆիլտրումը և աղմուկի գաղափարը։

Վատահությունը սոցիալական կապիտալի առանցքային բաղադրիչներից է։ Այն կարևորվում է քաղաքացիական հասարակության գործառնության համար, ինչպես նաև քաղաքացիական մասնակցությանը և դեմոկրատիային նպաստելու տեսանկյունից։ Վատահության անհրաժեշտությունն առաջանում է ապագայի անորոշության և անվերահսկելության դեպքում։ Որոշ հեղինակներ վատահությունը կապում են նաև ոխսկի հետ։ Այս պարագայում կարելի է ասել, որ վատահել նշանակում է վարվել այնպիս, կարծես թե ոխսկ չկա։ Վատահությունը հատկապես կարևոր է դարնաւում արդի հասարակությունում, որը բազմաթիվ տեսաբանների կողմից համարվում է «ոխսկի հասարակություն»<sup>10</sup>։ Ֆ. Ֆուկույաման վատահությունը հավասարեցնում է սոցիալական կապիտալի հետ։ Է. Լեսերը համոզված է, որ վատահությունը առանձին հասկացություն է և կարող է լինել ինչպես սոցիալական կապիտալի աղբյուր, այսնպես էլ դրա արդյունքը<sup>11</sup>։

<sup>10</sup>Putnam R. The Prosperous Community: Social Capital and Public Life. American Prospect, Vol. 13.1993. P. 2.

<sup>11</sup>Փուկույամա Փ. Դօվերն. Իզդատություն Խրանիտել. Մոսկվա 2006. С. 7.

Ստորև քննարկված են սոցիալական կապիտալի հիմնական տարրերից մեկի՝ վստահության ձևավորման գործընթացի վրա ազդող գործոնները, այդ գործննթացի սուբյեկտների հատկանիշները, մակարդակները, ուղղությունը: Ըստհանուր առմամբ, վստահության ձևավորումը այստեղ դիտարկվել է որպես երկկողմանի փոխակերպման գործընթաց, որի շրջանակներում էլ իրականացվել է վերլուծությունը: Հատ Շտոմպկայի՝ վստահությունը մեզ անհրաժեշտ է ապագա իրավիճակը վերահսկելու համար<sup>12</sup>: Այստեղից ենելով՝ վստահությունը ենթադրում է երկու տարր՝ սպասումներ, թե ինչպես կպահի իրեն ուրիշը ինչ-որ ապագա իրավիճակում, և գործողության նկատմամբ համոզվածություն: Ավելի պարզ լինելու համար բերենք հետևյալ օրինակը՝ ես հավատում եմ (վստահում եմ), որ այս աղջիկը լավ մայր կլինի, այդ իսկ պատճառով ել ամուսնանում եմ նրա հետ (ես իմ «խաղաղրույց» կատարում եմ նրա օգտին): Այս նույն օրինակով կարելի է վստահություն ցուցաբերել և «խաղաղրույց» կատարել քաղաքական գործիք, կազմակերպության և այնի համար: «Անվստահություն» հասկացությունը վստահության հայելային արտացոլումն է: Այն ևս խաղաղրույց է, սակայն՝ բացասական ենթատերսով. քանզի վտանգների մասին առկա է շատ տեղեկատվություն, այս դեպքում հիմնական իմաստը հետևյալն է՝ և՝ վստահողին, և՝ նրան, ում վստահում են, պեսը է դիտարկել որպես ռացիոնալ գործող անձանց, որոնք փորձում են մինիմալ ծախսերով ստանալ առավելագույն օգուտ:

Հետազոտության արդյունքից ենելով՝ կարող ենք սաել հետևյալը. սպասումների առումով պատկերը գոհացուցիչ չէ, քանզի հարցվողների գերակշռող մասը հիմնականում համաձայն չէ առհասարակ իրենց համայնքի մարդկանց, հասարակությանը կամ, ընդհանրապես, քրիստոնյաներին վստահելու հարցում: Սա ենթադրում է, որ նրանք չունեն սպասելիքներ կամ ունեն միայն բացասական սպասելիքներ, նրանց կարող են խարել կամ վնասել: Իսկ դա բերում է ֆիզիկական և սոցիալական տարածության մեծացմանը, հեռացմանը, ինչը հասարակական առումով դեստրուկտիվ է: Այնուամենայնիվ, հայերը նման իրավիճակը համարում են նորմալ և համոզված են, որ այն

<sup>12</sup> Штомпка П. Доверие: социологическая теория//Социологическое обозрение. Том 2. № 3 2002.С.32.

կարող է բերել զարգացման: Փաստորեն, հայ հասարակությունում զարգացումը հիմնվում է բացասական փորձի վրա: Հետազոտության արդյունքը վկայում է, որ հայերը լավատես են, և շուրջ 48%-ը կարծում է, որ կյանքը զարգանում է ճիշտ ուղղությամբ: Դա բացատրվում է նրանով, որ հայերը ներկա վիճակը «զնահասում են դրական» հուսալով, որ ապագայում լավ է լինելու: Բայց սա միայն զարակարական առումով է, իսկ գործողությունների տեսանկյունից, համոզված լինելով դրանց անարդյունավետության մեջ, ցուցաբերում են պասիվություն: Վերջինս իր անդրադարձն է ունենում քաղաքացիական մասնակցության վրա, ինչը դրսուրվում է միայն լոկալ գործողություններում: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ ընդհանրացված վստահությունը շատ դեպքերում վտանգավոր է: Խոսքը ոխսկերի մասին է: Այսօր ստեղծված պայմաններում ընդհանրացված վստահությունն ունի ամենացածր մակարդակը: Եթե ընդհանրական սոցիետալ վստահությունը դիֆուզային է, ապա այն չի կարող նպաստել փոխակերպմանը: Այս ամենի արդյունքում քաղաքացիները հրաժարվում են ամեն տեսակի մասնակցությունից: Հայերի մոտ բավական ցածր է քաղաքացիական մասնակցությունը, ինչը հետևանք է անվճառահության բարձր մակարդակի: Հայերը հակված են մասնակցելու միայն ծանրությունների հետ քննարկումներին, իսկ ավելի բարձր մակարդակում շատ քերև են ակտիվություն ցուցաբերում: Այս հանգամանքը կարող է վկայել երկու բան: առաջինը, որ ինստիտուտները չեն գործում աղեկվատորեն, և նրանց գործունեությունը փակ է հանրային լայն զանգվածների համար, երկրորդը, որ մարդիկ փորձում են խուսափել վնասներից և վտանգներից հիմնվելով իրենց իսկ ունեցած փորձի վրա: Նշենք նաև, որ այս տարբերակներից յուրաքանչյուրն էլ ունի ճշմարտության իր բաժինը, և դրանք փոխկապված են ու փոխլրացնում են միմյանց:

Քաղաքացիական մասնակցության տեսանկյունից ստացված տեղեկատվությունը վկայում է, որ միայն երիտասարդներն են ցուցաբերում մասնակցություն, որն էլ պայմանավորված է իրավիճակը փոխելու անկարող ցանկությամբ և տարիքային էնտուզիազմով:

Վստահության ձեավորումը կարելի է դիտարկել որպես փոխանակման գործընթաց, որտեղ փոխանակման հիմնական առարկան վստահությունն է: Այս գործընթացում կարևոր են հաղորդակցության սուբյեկտների հատկանիշները: Սուբյեկտների դերում կարող են

Ստորև քննարկված են սոցիալական կապիտալի հիմնական տարրերից մեկի՝ վստահության ձևավորման գործընթացի վրա ազդող գործոնները, այդ գործնթացի սուբյեկտների հատկանիշները, մակարդակները, ուղղությունը: Ըստ համանուր առմամբ, վստահության ձևավորումը այստեղ դիտարկվել է որպես երկկողմանի փոխակերպման գործնթաց, որի շրջանակներում էլ իրականացվել է վերլուծությունը: Ըստ Շոոմզկայի՝ վստահությունը մեզ անհրաժեշտ է ապագա իրավիճակը վերահսկելու համար<sup>12</sup>: Այստեղից ելնելով՝ վստահությունը ենթադրում է երկու տարր՝ սպասումներ, թե ինչպես կպահի իրեն ուրիշը ինչ-ոք ապագա իրավիճակում, և գործողության նկատմամբ համոզվածություն: Ավելի պարզ լինելու համար բերենք հետևյալ օրինակը՝ ես հավատում եմ (վստահում եմ), որ այս աղջիկը լավ մայր կլինի, այդ իսկ պատճառով էլ ամուսնանում եմ նրա հետ (ես իմ «խաղաղրույթը» կատարում եմ նրա օգտին): Այս նույն օրինակով կարելի է վստահություն ցուցաբերել և «խաղաղրույթ» կատարել քաղաքական գործի, կազմակերպության և այլնի համար: «Անվստահություն» հասկացությունը վստահության հայելային արտացոլումն է: Այն ես խաղաղրույթ է, սակայն՝ բացասական ենթատերաստով, քանզի վտանգների մասին առկա է շատ տեղեկատվություն, այս դեպքում հիմնական իմաստը հետևյալն է՝ և՝ վստահողին, և՝ նրան, ում վստահում են, պետք է դիտարկել որպես ռացիոնալ գործող անձանց, որոնք փորձում են մինիմալ ծախսերով ստանալ առավելագույն օգուտ:

Հետազոտության արդյունքից ելնելով՝ կարող ենք ստել հետևյալը. սպասումների առումով պատկերը գոհացուցիչ չէ, քանզի հարցվողների գերակշռող մասը հիմնականում համաձայն չէ առհասարակ իրենց համայնքի մարդկանց, հասարակությանը կամ, ընդհանրապես, բրիտանյաններին վստահելու հարցում: Սա ենթադրում է, որ նրանք չունեն սպասելիքներ կամ ունեն միայն բացասական սպասելիքներ, նրանց կարող են խարել կամ վնասել: Իսկ դա բերում է ֆիզիկական և սոցիալական տարածության մեծացմանը, հեռացմանը, ինչը հասարակական առումով դեսորուկտիվ է: Այնուամենայնիվ, հայերը նման իրավիճակը համարում են նորմալ և համոզված են, որ այն

<sup>12</sup>Штомпка П. Доверие: социологическая теория//Социологическое обозрение. Том 2. № 3 2002.С.32.

կարող է բերել զարգացման: Փաստորեն, հայ հասարակությունում զարգացումը հիմնվում է բացասական փորձի վրա: Հետազոտության արդյունքը վկայում է, որ հայերը լավատես են, և շուրջ 48%-ը կարծում է, որ կյանքը զարգանում է ճիշտ ուղղությամբ: Դա բացատրվում է նրանով, որ հայերը ներկա վիճակը «զնահատում են դրական» եռուսարվ, որ ապագայում լավ է լինելու: Բայց սա միայն օգաղափարական առումով է, իսկ գործողությունների տեսանկյունից, համոզված լինելով դրանց անարդյունավետության մեջ, ցուցաբերում են պասիվություն: Վերջինս իր անդրադարձն է ունենում քաղաքացիական մասնակցության վրա, ինչը դրսնորվում է միայն լոկալ գործողություններում: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ ընդհանրացված վստահությունը շատ դեպքերում վնանզավոր է: Խոսքը ոխակերի մասին է: Այսօր ստեղծված պայմաններում ընդհանրացված վստահությունն ունի ամենացածր մակարդակը: Եթե ընդհանրական սոցիետալ վստահությունը դիֆուզային է, ապա այն չի կարող նպաստել փոխակերպմանը: Այս ամենի արդյունքում քաղաքացիները հրաժարվում են ամեն տեսակի մասնակցությունից: Հայերի մոտ բավական ցածր է քաղաքացիական մասնակցությունը, ինչը հետևանք է անվլստահության բարձր մակարդակի: Հայերը հակված են մասնակցելու միայն ծանոթների հետ քննարկումներին, իսկ ավելի բարձր մակարդակում շատ քէրն են ակտիվություն ցուցաբերում: Այս հանգամանքը կարող է վկայել երկու բան. առաջինը, որ ինստիտուտները չեն գործում աղեկվատորեն, և նրանց գործունեությունը փակ է հանրային լայն զանգվածների համար, երկրորդը, որ մարդիկ փորձում են խուսափել վնասներից և վտանգներից հիմնվելով իրենց իսկ ունեցած փորձի վրա: Նշենք նաև, որ այս տարբերակներից յուրաքանչյուրն է ունի ճշմարտության իր բաժինը, և դրանք փոխկապված են ու փոխլրացնում են միմյանց:

Քաղաքացիական մասնակցության տեսանկյունից ստացված տեղեկատվությունը վկայում է, որ միայն երիտասարդներն են ցուցաբերում մասնակցություն, որն էլ պայմանավորված է իրավիճակը փոխելու անկարող ցանկությամբ և տարիքային ենուուզիազմով:

Վստահության ձևավորումը կարելի է դիտարկել որպես փոխանակման գործընթաց, որտեղ փոխանակման հիմնական առարկան վստահությունն է: Այս գործընթացում կարևոր են հաղորդակցության սուբյեկտների հատկանիշները: Սուբյեկտների դերում կարող են

հանդես գալ ինչպէս անհատները, այնպէս էլ խմբերը, կառույցները, ինստիտուտները: Վստահությունը երկկողմանի երևոյթ է. այն դիտարկվում է որպէս փոխազդեցուրյան գործընթացի հիմք և միևնույն ժամանակ արդյունք: Այսինքն ենթադրվում է, որ գոյություն ունի փոխանակման որոշակի գործընթաց, որտեղ կողմերը ներգրավված կլինեն՝ ենելով իրենց և մյուս կողմի իրենցից ունեցած սպասումներից: Այս գործընթացում կարենք տեղ են գրադեցնում վստահության հիմնական բաղադրիչները սպասումներն ու համոզվածությունը: Մեր կողմից ուղարկվող յուրաքանչյուր «հաղորդագրություն» (message) մինչև ստացողին հասնելն անցնում է ֆիլտրում: Վստահության տեսանկյունից հայ հասարակությունում այդպիսի ֆիլտրեր են մշակույթը, փոխազդեցուրյան սոցիալական կոնտեքստը, սուրբեկուների էմպիաները, ինքնությունը և, իհարկե, իրավիճակը:

Փոխանակման գործընթացում կարենք տեղ է գրադեցնում նաև աղմուկի գաղափարը: Վստահության փոխադարձությունն էապէս կախված է անհատի անցյալի փորձից, տեղեկատվությունից և հաղորդակցությունից: Ավելի վստահելի անհատները հավանական են, որ փոխանակեն վստահությունը մյուսների հետ: Որոշակի մակարդակի վստահություն ձեռք բերելուց հետո մարդիկ կամ, այսպէս կոչված, վստահողներն այլ անհատների վրա կունենան ազդեցություն, եթք սկսեն փոխանակել: Այս առումով հետազոտության արդյունքները ցուց են տալիս, որ հայերը որոշակի առումով վստահելի են համարում միայն իրենց շրջապատի մարդկանց, իսկ իրենց՝ որպէս ամբողջի, նկատմամբ լցված են անվստահությամբ: Այժմ այս պատկերը պրոյեկտենք հայ հասարակության վրա: Նախ սկսենք փոխազդեցության սուբյեկտներից: Հարկ է նշել, որ հայ հասարակությունում վստահելի հարաբերությունները դրաբ չեն զայիս ընտանեկան, ընկերական, բարեկամական հարաբերություններից: տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրը հենց ընտանիքի անդամները, ընկերները, բարեկամները, որոշ իմաստով նաև հարևաններն են: Սա նշանակում է, որ հայ հասարակությանը բնորոշ են հիմնականում փակ սոցիալական ցանցերը, ինչը բռույ չի տալիս զնալ առաջ և կապեր հաստատել այլ ցանցերի հետ, ինչն էլ պայմանավորում է վստահության ցածր մակարդակ: Սա միանշանակորեն խոչընդոտում է զարգացմանը: Սակայն ոիսկի տեսանկյունից վստահության նեղ շրջանակն ավելի անվտանգ է: Այս պարագայում ավելի քիչ հավանա-

կան է, որ ընտանիքի անդամները, ընկերները, բարեկամները վնաս-ներ ու վտանգներ կպատճառեն: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ գործընկերներին ամենաքիչն են վստահում, ինչը պայմանավորված է նրանց միջև առկա մրցակցությամբ:

Անդրադարձնալով վստահության տիպերին՝ հարկ է նշել, որ առհասարակ ընդունված է առանձնացնել երեք տեսակի վստահություն՝ անհատական, ընդհանրացված և ինստիտուցիոնալ: Առաջինը վստահությունն է մտերիմների, ծանոթների միջև, և առկա է կայացած հարաբերությունների, կայացած սոցիալական ցանցերի դեպքում: Վստահության երկրորդ տիպը տարածվում է նաև անծանոթների վրա՝ հաճախ ընդհանուր արժեքների առկայության շնորհիվ: Վստահության երրորդ տեսակը վերաբերում է կառավարման ֆորմալ ինստիտուտներին<sup>13</sup>: Հետազոտության արդյունքը ցույց է տալիս, որ կանանց շրջանում գերակշռում է անհատական վստահությունը: Կանայք մարդուն վստահելու համար կարևորում են նրա հետ երկար ժամանակ ծանոթ լինելը, այսինքն՝ կանայք ավելի հակված են վստահելու այն դեպքում, եթե կան ամուր, կայացած հարաբերություններ: Քանի որ վստահությունը սոցիալական հարաբերությունների ցանցերի ստեղծման կարևոր նախապայման և դրանց պահպանման գլխավոր նորմ է, ուստի, ընդհանուր առմամբ, կանանց մոտ վստահության ավելի ցածր մակարդակն ինքնին սոցիալական ցանցերի սահմանափակման պատճառ է դառնում: Տղամարդկանց ևս բնորոշ է անհատական վստահությունը, բայց առկա է նաև ընդհանրացված վստահությունը: Բնատիտուցիոնալ վստահության դեպքում՝ կարող ենք ասել, որ թե՝ կանայք, թե՝ տղամարդիկ հակված են վստահելու այն համակարգերին, որոնց վերաբերյալ իրենք ավելի տեղեկացված են կամ ընդգրկված են հենց այդ համակարգերում: Հետազոտության արդյունքը վկայում է, որ տղամարդիկ ավելի հաճախ կարևորում են վստահությունը գործնական ոլորտում և այն համարում հաջողության երաշխիք: Մինչդեռ կանայք վստահությունը համարում են հանգիստ և ապահով կյանքի գրավական:

Հատկանշական է այն, որ կանայք հաճախ խոսում են ոչ թե

<sup>13</sup>Թաղեայան Գ., Շախսուվարյան Ա., Սոցիալական կապիտալի դերը ժամանակակից հայ հասարակության գեներային մորթլության գործնքացում, Եր., ԵՊՀ հրատ., Բաներ, 3(117), 2005, էջ 12:

ուրիշների նկատմամբ իրենց վստահության մասին, այլ իրենց նկատմամբ ուրիշների վստահության մասին, ինչը նրանց տախս է համոզվածություն և համարձակություն: Սա վկայում է այն մասին, որ կանաց ինքնազնահատականը մեծապես կախված է շրջապատի գնահատականից, և այդ առումով շրջապատը և նրա վստահությունը շատ կարևոր են կոնց ինքնահատատառման համար:

Հայ հասարակությունում անհատական և ինստիտուցիոնալ վստահությունը հակադիր են միմյանց, քանզի լինելով փոխակերպվող հասարակություն առցիպական համակարգերի նկատմամբ ընդիմանացված վստահությունը լիովին բացակայում է: Վստահությունն ավելի մեծ է գործընկերոց, քան համակարգի նկատմամբ: Անհատական վստահության վրա հիմնվող համակարգերը հասնում են որոշակի մակարդակի և կանգնում: Մյուս կողմից էլ պետք է հուսալ, որ անհատական վստահության ավելացումը որակական փոփոխություններ կերպի հասարակական մակարդակում և կփոխակերպվի ինստիտուտների նկատմամբ վստահության:

Ինստիտուցիոնալ անվստահության պատճառներից են.

1. առցիպական հարաբերություններում ներգրավվածների կողմից իրենց դերերի ոչ գործիմաց իրականացումը,
2. փոխազդեցության մեջ գտնվող համագործակիցների՝ իրենց պարտականությունների ու ֆունկցիաների շիրականացումը,
3. հասարակականից ավելի սեփական շահերի գերազնահատումը:

Ինստիտուցիոնալ անվստահության պատճառներից մեկն էլ այն է, որ ներկայիս հասարակությունը գնում է դեպի դերային կառուցվածքի բարդացմանը, ինչն էլ դժվարացնում է դերերի աղեկված իրականացումը:

Լիովին վստահություն կա եկեղեցու և բանակի նկատմամբ: Ինչ վերաբերում է եկեղեցուն, չնայած որ այն այսօր չի իրականացնում այն ֆունկցիաները, ինչ դարեր շարունակ ունեցել է, այնուամենայնիվ, դեռևս պահպանում է պատմական ուժն ու նշանակությունը: Բանակի առումով կարող ենք նշել, որ ստեղծված իրավիճակը փակ սահմաններ երկու հարևան պետությունների հետ, դարաբարյան համակարտությունը ստիպում է մեզ հավատալու մեր ուժերին, ինչն իր ճշմարտության հատիկն ունի:

Անծանոթների նկատմամբ վստահությունը հիմնականում հիմ-

նըփում է աշխարհընկալման լավատեսական ուղու և այն հավատի վրա, որ վաղը ավելի լավ է լինելու, եթե մենք կարողանանք կառավարել մեր տցիալական միջավայրը, կենսամակարդակը: Այս առումով հասկանալի է, որ գոյություն չունի վստահություն անծանոթների նկատմամբ, քանզի վնասները կամ վտանգներն այս դեպքում ավելի մեծ կլինեն, այսինքն ոհսկը ավելի մեծ է: Միայն տնտեսական համագործակցության տեսանկյունից գոյություն ունի «վստահություն»:

Վստահության ուսումնասիրությունը վերջին հաշվով հանգեցնում է հանդրտողականության չափմանը: Ստացվում է, որ հայերը պատրաստ են ընկերական հարաբերությունների հիմնականում բոլոր ազգությունների, բայց ամենաքիչն՝ աղբբեշանցիների և քուրքերի հետ: Բնականաբար, սա ունի իր մակրո պատճառները: Գործարության համար հայերը հիմնականում վստահում են ամերիկացիներին և ուսներին: Սա ևս մեկ անգամ ապացուցում է այդ երկրներից մեր կախվածությունը և նրանց հետ համագործակցելու փորձը: Հետաքրքիր է նաև, որ գործնական հարաբերություններ հայերը հայերի հետ ավելի քիչ նպատակահարմար են համարում, քանզի կա վտանգ, որ կխաբվեն հենց «տնեցիների» կողմից: Ամուսնության առումով հայերը նախընտրում են միայն իրենց երնուսին պատկանողներին, սա վկայում է պահպանողական լինելու մասին, ինչն այս պարագայում ինտեղրող և կայունացնող ֆունկցիա է կատարում:

Կարենը հարցերից է նաև սուբյեկտների հատկանիշները: Այս առումով որպես վստահության վրա հիմնված փոխազդեցության հիմք կարող է լինել սուբյեկտների պատասխանատվությունը: Սակայն ակներև է, որ որոշակի նախնական փոխարաբերություններ են անհրաժեշտ: Այս նախնական փոխարաբերությունները կարելի է անվանել «վստահության փորձաշրջան»: Կայուն փոխազդեցության համար վստահության հիմք կարող է լինել երաշխավորումը, այսինքն քեզ համար վստահելի որևէ մեկի խոսքը: Այս դեպքում պատկերը հետևյալն է: հայերը հակված են վստահելու հարցված մարդու խոսքին՝ «ինքը մեր լավ ախպոր ախպերն ա»: Սա գործում է ինչպես անհատական մակարդակում, այնպես էլ ինստիտուցիոնալ: Հարկ է նշել, որ վերջինս առավել բնութագրական է տղամարդկանց համար, իսկ կանայք ավելի հակված են վստահելի հարաբերություններ ունենալու համար փոխազդեցության սուբյեկտներին ստուգել՝ որևէ պատասխանառու գործ «հանձնարարելով»:

Վատահության փոխադարձությունը հայ հասարակությունում նկարագրվում է ենելով երկու հիմնական գործոններից՝ *անհատի փորձից* և *պարտավորվածության ցցացումից*: Առաջինը՝ անցյալի փորձն է պայմանավորում անհատի հետագա վարքի նմուշները. այն վերաբերում է անհատի պատմական փոխազդեցություններից բխող «ուժիքսիվ գիտակցությանը»: Այսինքն վստահության առաջացումը ենթադրում է որոշակի փորձի առկայություն: Սա վստահության ձևավորման կարևորագույն մեխանիզմներից է: Երկրորդ մոտեցումն ավելի անհատական է, այսինքն՝ կախված է անհատական հատկանիշներից: Այս առումով Շտոմպկան վստահության մշակույթի ձևավորման համար առանձնացրել է սուբյեկտների մի շարք բնութագրիչներ: Այսուել իմքի անդամները որքան ակտիվ են, լավատես, նորարարական և փոփոխությունների նկատմամբ բաց են, այնքան ավելի հավանական է, որ հեշտ կլինի վստահության ձևավորումը, իսկ հակառակ պատկերի դեպքում ձևավորվում է անվստահություն<sup>14</sup>: Պատկերն ըստ հետազոտության արդյունքների հետևյալն է. հարցվողների 81,2%-ը իրենց շրջապատին բնորոշել է որպես վստահելի, մինչդեռ միայն 39,6%-ն է հայերին բնորոշել որպես վստահելի: Սա պայմանավորում է ընդհանրացված անվստահության առկայությունը: Հարկ է նշել, որ շրջապատի մարդկանց մեջ ներառված են ընտանիքի անդամները, բարեկամները, ընկերները, հարևանները: Սա ևս մեկ փաստարկ է, որ հայ հասարակությունում գործում է միայն անհատական վստահությունը, սակայն այստեղ կ բաշխումը միանշանակ չէ: Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ նույնիսկ լիակատար վստահություն չկա շրջապատի մարդկանց նկատմամբ, քանզի, ինչպես երեսում է տվյալներից, շրջապատի մարդիկ համեմատարար ավելի փակ են նորարարությունների, փոփոխությունների համար, ինչպես նաև ավելի պահպանդական, իսկ ըստ Շտոմպկայի՝ սրանք ավելի շուտ անվստահության ձևավորման հիմք կարող են լինել:

Վստահության ձևավորման գործում կարևոր է նաև կրոնական պատկանելությունը. հայերի 12,5%-ը վստահում է բոլոր քրիստոնյաներին, մինչդեռ մեզ՝ հայերիս, վստահում է հարցվողների միայն 3,1%-ը: Սա պայմանավորված է ևս անցյալի օբյեկտիվ պատմական փորձով: Դարեր շարունակ մեր կրոնական հավատալիքները եղել են

<sup>14</sup>Штомпка П., Доверие: социологическая теория// Социологическое обозрение, Том 2. № 3. М.2002.С.35.

մեզ ուղեկից: Մեր ինքնությունը, հիմնված լինելով պատմական անցուղարձի վրա, իր մեծ ազդեցությունն ունի վաստահության ձևավորման գործում: Այդ է պատճառներից մեկը, որ մինչև օրս ապրում ենք Տիգրան Սեծով, Վարդան Սամիկոնյանով: Անվաստահության հետևանքով առաջացած վակուումը լրացվում է այլ կառուցվածքների կողմից: Այս առումով կարելի է փաստել, որ հայ հասարակությունում դրա համար ստեղծված են բոլոր նախապայմանները: Այդ այլնուրանքային միջոցները ձևավորվում են, անհատական, վարքային և մշակութային մակարդակներում: Սակայն պետք է նշել, որ այդ միջոցներից շատերը հասարակական առումով կարող են դիսֆունկցիոնալ լինել: Դրանց թվում կարելի է դիտարկել կոռուպցիան, գետողացիան, պատերնալիզմը, էքստերնալացված վստահությունը<sup>15</sup>: Վերջիններս ել փոխազդեցություններում իրականացնում են աղմուկի դերը:

Կոռուպցիան կարգավորվածության թվայցալ պատկերն է, ուրիշների վրա ազդելու միջոց, շրջապատող միջավայրում տիրող քասի «վերահսկում»: Այսօր հայ հասարակությունում մեծամասնք հակված են կոռուպցիոն վարքազիծ ցուցաբերելուն: Պետք է նշել, որ սա միայն մեր հասարակության խնդիրը չէ: Կոռուպցիայի հիմնախնդիրն առկա է նույնիսկ զարգացած հասարակություններում: Այնուամենայնիվ, կոռուպցիան վտանգավոր է վստահության ձևավորման համար, այն նպաստում է «ծանրի ինստիտուտի» զարգացմանը: Կոռուպցիան այնքան լայն տարածում ունի հայ հասարակությունում, որ կարելի է ասել կենսակերպ է դարձել:

Կոռուպցիան մեծ ազդեցություն ունի նաև ինստիտուցիոնալ վստահության ձևավորման վրա: Պարզվում է, որ ամենակողությամբ պացված ոլորտը ուստիկանությունն է (42,6%), իրավական համակարգը: Մրա պատճառներից մեկը մեր հասարակությունում առկա կարծրատիպերն են և որոշակի սոցիալական դերերի նկատմամբ ձևավորված բացասական պատկերացումները: Պետք է արձանագրել, որ բոլոր ոլորտներում կոռուպցիոն դրսնորումներ կան: Այս մասին հարցվողների տեղեկությունները հիմնվում են անձնական կամ ընկերների, բարեկամների փորձի վրա: Սա նշանակում է, որ նրանք ստիպված են տալ կամ վերցնել կաշառք, որը հիմք է ինստիտուցիո-

<sup>15</sup>Foley M., Edwards B. Importance of Trust-Building in Transition. 2000.P.3.

նալ անվատահության համար:

**Գետողացիան** ենթադրում է, որ խմբի շուրջը ձևավորվում են հստակ ընդգծված սահմաններ՝ արտաքին միջավայրից «պաշտպանելու» համար: Մրանով անհատները կորցնում են կազմը արտաքին աշխարհի հետ, ինչն էլ պատճառ է անորոշության խորացման համար: Մի կողմից այն կոմպենսացվում է տեղական որեւ սոցիալական, էթնիկ կամ ընտանեկան խմբին նվիրվածության ամրապնդմանը, մյուս կողմից էլ՝ ուղեկցվում է օտարների նկատմամբ քսենոֆոբիայի զարգացմամբ: Հասկանալի է, որ այն բավական տարածված է հայ հասարակությունում, թեկուզ միայն հաշվի առնելով այն, որ վստահությունը չի տարածվում ընտանեկան, ընկերական, բարեկամական հարաբերություններից դուրս, կամ խնդիրների լուծման ժամանակ հայերը օգնության են դիմում իրենց ծանոթներին կամ էլ տեղեկատվության սուացման միջոցներից նախընտրում են ընկերների, բարեկամների տվյալ տեղեկատվությունը:

**Պատերենալիզմ:** Հոր ուժեղ, ավտորիտար առաջնորդի կերպարի մասին երազանքները, որոնք հեշտությամբ կհաստատեն կարգ ու կանոն (անհրաժեշտության դեպքում նաև ուժի կիրառմամբ), կմաքրեն աշխարհն անվատաելի անհատներից, կազմակերպություններից, ինստիտուտներից: Այսիսի պահանջմունքը բավարարվում է այլ ինստիտուտների կողմից, ինչպիսիք են աղանդները: Կարող ենք փաստել, որ այսօր աղանդավորական շարժումները գնալով հզրանում են: Սա պատճառ է ինչպես վերը նկարագրված երևույթի, այնպես էլ եկեղեցու բոլով գործունեության:

**Եքստերնալացված վստահություն:** Տեղական քաղաքական գործիչների, ինստիտուտների, արտադրանքի նկատմամբ ստեղծված անվատաելի իրավիճակում մարդիկ դիմում են արտաքին՝ այլ հասարակությունների, սկսում են վստահել նրանց քաղաքական առաջնորդներին, կազմակերպություններին և ապրանքներին: Հաճախ կարելի է լսել, որ «Հայաստանին պետք է Վլաղիմիր Պուտինի կամ ինչոր այլ մեկի նման նախագահ», «այս կամ այն ապրանք «գերմանական է», որակի մասին խոսք չկա», «ուրիշ տեղեր սենց չի», «երանի իրանց» և նման շատ ու շատ արտահայտություններ: Այս ամենը վկայում են, որ հայերն ունեն եքստերնալացված վստահության բարձր մակարդակ, ինչն, անխոս, բերում է սեփական ուժերի, երկրի, ինստիտուտների նկատմամբ անվատահության ձևավորմանը:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում, հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

▪ Այսօր ստեղծված պայմաններում ընդհանրացված վստահությունն ունի ամենացածր մակարդակը, այսինքն ընդհանրական սոցիետալ վստահությունը դիֆուզային է, ուստի սա է պատճառներից մեկը, որ քաղաքացիները հրաժարվում են ամեն տեսակի մասնակցությունից:

▪ Քաղաքացիական մասնակցության տեսանկյունից ստացված տեղեկատվությունը վկայում է, որ միայն երիտասարդներն են ցուցաբերում մասնակցություն, որն էլ պայմանավորված է իրավիճակը փոխելու անկարող ցանկությամբ և տարիքային ենտուգիազմով:

▪ Հայ հասարակությունում վստահելի հարաբերությունները դուրս չեն գալիս ընտանեկան, ընկերական, բարեկամական հարաբերություններից, սա նշանակում է, որ հայ հասարակությունում առկա են հիմնականում փակ սոցիալական ցանցեր, որոնք թույլ չեն տալիս առաջ գնալ և կապեր հաստատել այլ ցանցերի հետ, ինչն էլ պայմանավորում է վստահության ցածր մակարդակը:

▪ Կանանց մոտ գերակշռում է անհատական վստահությունը: Կանայք մարդուն վստահելու համար կարևորում են նրա հետ երկար ժամանակ ծանոթ լինելը, այսինքն՝ կանայք ավելի հակված են վստահելու այն դեպքում, եթե կան ամուր, կայացած հարաբերություններ:

▪ Կանանց ինքնազնահատականը մեծապես կախված է շրջապատի գնահատականից, և այդ առումով շրջապատը և նրա վստահությունը շատ կարևոր է կնոջ ինքնահատատման համար:

▪ Ինստիտուցիոնալ վստահության դեպքում կարող ենք ասել, որ թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ հակված են վստահելու այն համակարգերին, որոնց վերաբերյալ իրենք ավելի տեղեկացված են կամ ընդգրկված են հենց այդ համակարգերում:

▪ Հայ հասարակությունում անհատական և ինստիտուցիոնալ վստահությունները հակառի են միմյանց:

▪ Ինստիտուտի նկատմամբ վստահության հիմքում ընկած է այդ կառուցի աշխատանքային պատմությունը, դեկավարի հարգված լինելը կամ չլինելը և այլն:

▪ Անձանտքների նկատմամբ վստահությունը հիմնականում հիմնվում է աշխարհընկալման օպտիմիստական ուղու վրա և այն

հավասի վրա, որ վաղն ավելի լավ է լինելու, եթե մենք կարողանանք կառավարել մեր սոցիալական միջավայրը, կենամակարդակը:

• Անվատականության հետևանքով առաջացած վակուումը լրացվում է այլ կառուցվածքների կողմից կոռուպցիա, գետողացիա, պատերնալիզմ, էքստերնալացված վատահություն:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում ներկայացված են վատահության ձևավորման գործընթացի առանձնահատկությունները հայ հասարակությունում: Հետագույնությունն անցկացվել է Երևանում, 2014թ.-ին: Հիմնական շեշտադրումներից է վատահության ձևավորման մեխանիզմների, վատահության տեսակների, վատահության ձևավորման գործուների և մակարդակների բացահայտումը: Ըստհանուր առևամբ, վատահությունը սահմանվում է որպես երկկողմանի փոխանակման գործընթաց, որտեղ կարևորվում են փոխանակման գործընթացի սուբյեկտների հասկանիշները, փոխանակվող հաղորդագրության ֆիլտրումը և աղմուկի գաղափարը:

**Բանալի բառեր-** վատահություն, քաղաքացիական մասնակցություն, սպասումներ, ոիսկ, հանդուրժողականություն:

## ФОРМИРОВАНИЕ ДОВЕРИЯ КАК ФАКТОР СТАНОВЛЕНИЯ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА

Лилианна Овсепян

Аспирант Института философии,  
социологии и права НАН РА

### РЕЗЮМЕ

В статье рассмотрены особенности процесса формирования доверия в армянском обществе. Использованы материалы социологического исследования, проведенного в Ереване в 2014г. Основной акцент ставится на выявление механизмов формирования доверия, на виды доверия, на факторы и уровни формирования доверия. Доверие рассматривается как процесс двустороннего обмена, где важную роль имеют свойства субъектов процесса обмена, фильтрация обмениваемого послания и идея шума.

**Ключевые слова:** доверие, гражданское участие, ожидания, риск, толерантность.

## **TRUST-BUILDING AS A FACTOR FOR CONSOLIDATION OF CIVIL SOCIETY**

**Lilianna Hovsepyan**

*PhD student, Institute of Philosophy,  
Sociology and Law of RA NAS*

The paper discusses the specific features of a trust building process in the Armenian society. It uses findings of the sociological survey conducted in Yerevan in 2014. The focus is on identifying trust-building mechanisms, on types of trust and on factors and levels in trust building. Trust is regarded as a bilateral exchange process, wherein features of the exchange process actors, filtering of the exchanged message and the idea of noise play an important role.

**Key words:** trust, civic participation, expectations, risk, tolerance.